

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԺԳ. ՏԱՐԻ 1998

ՄԷ՛Կ ԱԶԳ ԵՒ ՄԷ՛Կ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԱԾՏՈՑԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԳՐԱԽԱԿԱՆՆ Է
ԼԵՒՈՆ ԽԱԶԵՐԵԱՆ

Համազգային խնդիրների հիմնահարցերի լուծման ծրագրում՝ «Ազգային տունը» կարգի բերելիս, անշուշտ կարելորագոյն հրատապութիւն պէտք է ներկայացնի նաեւ «ՄԷ՛Կ ազգ եւ մԷ՛Կ միասնական ուղղագրութիւն» պահանջի իրագործումը ազգակերտման ներկայ մաքառումներում, որպիսին գործող օրինաչափութիւն է եւ ընդհանրական՝ աշխարհի իւրաքանչիւր ազգի գրագրութիւնում, անխտի՛ր: Սակայն շուրջ ութսուն տարի է, ինչ արհեստականօրէն եւ ստալինեան բռնադատութեամբ պարտադրուած էր անհարկիօրէն ու անհեթեթաբար հայրենաբնակ մեր ժողովրդին արեղեանական եւ ապա «բարեփոխուած» կիսամաշտոցեան հաշմուած ուղղագրութիւնների որդեգրումը՝ ազգային պառակտման, թուլացման, ուժասպառման, ի վերջոյ նաեւ համաձուլման հեռամէտ նպատակադրմամբ, որ հետամտում էր կոմունիստական վարչակարգի ապազգային գաղափարախօսութիւնը հայրենիքում:

Մինչդեռ Հայրենիք-Սփիւռք փոխյարաբերութիւնների սերտաճման եւ հոգեկան-մշակութային հաղորդակցման առաւել կանխախ արգելակներից է եղել եւ մնում, հիմնականում, հէնց հայ ազգի ստիպողաբար եւ վարչական կամայականութեամբ կիրառուած անտրամաբանական եւ միանգամայն անհասկանալի օրապակաս ուղղագրութիւնը, որ մեծապէս խոչընդոտում է մեր առաջընթացին եւ ազգային միասնականութեան սեւեռուն նպատակներին, մի խօսքով՝ նորմալ ազգ հանդիսանալուն...:

Դեռեւս «Աքանջելի» Կորիւնը հինգերորդ դարում Մեծն Մաշտոցի հանճարեղ մտայղացմամբ Հայագիր, Վրացագիր եւ Աղուանագիր դպրութիւնների սկզբնաւորման պատմութիւնը շարադրելիս խորապէս ըմբռնել էր միասնական ուղղագրութեան յոյժ կարեւորութիւնը ազգային ներկառուցուածքի սերտաճման եւ ազգային ինքնութեան դարբնման ոգորումներում. գնահատելով մասնաւորապէս Մես-

րոպ Մաշտոցի պատմա-մշակութային սխրանքը նաև վրացագիր մատենագրութիւն եւ դպրութիւն ստեղծելու առումով՝ Մաշտոցի շնորհալի աշակերտը խորափանց ընդհանրացմամբ նշում էր. «Եւ արդ՝ զնոսա, որ յայնչափ ի մասնատր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամացն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրհնէր» (աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Եւ արդ՝ վրացիներին, որ այնքան առանձին եւ անջատ-անջատ լեզուներով էին խօսում, Մաշտոցը համախմբեց, վերածեց մէկ ազգի, մէկ աստուածային պատգամներով կապեց՝ դարձնելով մէկ Աստուծոյ փառաբանիչներ», տե՛ս «Վարք Մաշտոցի», Երեւան, 1941 թ., էջ 64):

ԺԳ դարի Հայագիր դպրութեան տեսարան Վարդան Արեւելցին, մաշտոցեան գրահամակարգի 36 նշանագրերի բնութագրումը եւ իմաստաւորումը ներկայացնելիս հաւաստում է, որ հրաշագործ է գիրը, մեր առաջադիմութեան ու առաջընթացի «սանդուխտ» է ազգովի բարձրանալ քաղաքակրթութեան աստիճաններով, շնորհիւ ա՛յն բանի, որ մեր ժողովրդի մերձեցման մագնիսականութեամբ է օժտուած. «անծանօթը» ծանօթացնում է, հեռաւորը մերձեցնում, անբարբառ լինելով՝ ճարտասան է, երգաբան լինելով՝ յամրախօս, սուրհանդակ լինելով՝ «տեղապահ» է, անթեւ թռչուն լինելով հանդերձ՝ անշարժ մնացող, անշարժ լինելով հանդերձ՝ շարժուող է, արագընթաց լինելով հանդերձ՝ յամրաշարժ է, տեղում երեւալով հանդերձ՝ տեղում չէ, մարմնաւոր լինելով հանդերձ՝ եթերային է...: Հակադրութիւնների այս իմաստաւորմամբ էլ բացայայտում է հեղինակը գրի բազմախորհուրդ բնոյթն ու էութիւնը: Բնագրային ընթերցմամբ. «Ո՛վ գերապանծ գիր գարմանալի, ո՛վ հիահրաշ տիպ գերագարդեալ,

ո՛վ սխրալի սանդուխտ մեր ելից, անծանօթ եւ ծանուցեալ, հեռաւոր եւ մօտակայ, անբարբառ եւ ճարտասան, երգաբան եւ յամրախօս, սուրհանդակ եւ տեղապահ, անթեւ թռչուն եւ անշարժ կայուն, կայիւք ընթացեալ եւ թռչմամբ մնացեալ, երագընթաց եւ յամրաշարժ, ի տեղի եւ անտեղի, ի մարմին եւ յանմարմին...» (Վարդան Արեւելցի, Ներբողեան..., տե՛ս «Բանբեր Մատենադարանի», թիւ 7, 1964):

Հայերէնի ուղղագրութիւնը իր օրինաչափութիւններով ու կանոններով դեռեւս որոշել է Հայագիր դպրութեան հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը, այլապէս հանճարեղօրէն իր հեղինակած հայերէնի գրահամակարգը գործարկել ամենեւին չէր կարողանայ առհասարակ, այդ իսկ պատճառով այն կոչւում է իրաւամբ հէնց ի՛ր անունով՝ «ՄԱՇՏՈՑԵԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ»:

Հայագիտական ուսումնասիրութիւնները աներկբայօրէն ցոյց են տալիս, որ Մաշտոցը ոչ միայն հայերէնի այբուբենական գրահամակարգը ստեղծեց, այլեւ Հայագիր մատենագրութիւնը, որի հիմքում դրեց ուղղագրական իր իսկ սահմանած կանոնները, որ ամենայն յաջողութեամբ եւ համապարփակութեամբ՝ հայերէնի նոյնիսկ հետագայ զարգացման գրական բոլոր փուլերի մշակման համար նրա արտասանական համակարգերի արտացոլման միանգամայն յուսալի հնարաւորութեամբ:

Իրականում՝ Սկզբնաղբիւր Կորիւնի հաւաստմամբ, Մաշտոցը իրողապէս հանդիսացել է նաև հայերէնի առաջին այբբենաբանի հեղինակը հայորդի սերունդների գրաճանաչութեան եւ ընթերցման ուսուցման համար՝ դասական հայերէնի հնչիւնակապակցութիւնների եւ վանկակազմութիւնների օրինաչափական կանոնների հմտացմամբ, որ այն ժամանակուայ արտայայտութեամբ «Գրչութեան արուեստ» էր կոչւում: Դարձեալ՝ ճշմարտախօս Կորիւնի հաւաստմամբ այդ փաստը նոյն-

պէս վկայուած է. «Եւ անդ (իմա՛ Եդեսիայում, 405 թուականին Մաշտոցը Հայոց այբուբենը հեղինակելիս) վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ, ՅՕՐԻՆԷՐ ՍԻՂՈՐԱՅԻԻՔ (իմա՛ յունարէն սυλλαβη=«վանկեր» բառաձևի հայերէն տառադարձութիւնն է - Լ. Խ.) ԿԱՊՕՔ» (անդ, էջ 48): Աշխարհաբար թարգմանութեամբ՝ «Եւ այնտեղ շուտով ձեւաւորեց հայերէն տառերը, տառանունները նշանակեց, յաջորդականութիւնը դասաւորեց եւ կազմեց վանկերի ու հնչիւնակապակցութիւնների կանոնները իր այբուբենի կիրառութեամբ», որ ինքնըստինքեան ակնարկում է՝ ճշդեց հայերէնի ուղղագրութիւնը, այն է՝ ձայնաւորների, երկբարբառների եւ եռբարբառների, ինչպէս եւ բաղաձայնների հետ նրանց զուգորդումները, որ առանց այդպիսի հնչիւնաբանական ստուգադոյն վերլուծութիւնների անհնարին է պատկերացնել անգամ:

Լեզուաբանական գիտութեան մէջ անվիճելի իրողութիւն է, որ ուղղագրութիւնը մատենագրութիւն ունեցող հին ժողովուրդների համար խիստ պահպանողակ է եւ աւանդակաւ, մինչդեռ ուղղախօսութիւնը բոլոր դէպքերում համաժամանակեալ է եւ արդիական իր կիրառմամբ, որ բոլորովին տարբեր է ուղղագրութիւնից, եւ այն շփոթել անթոյլատրելի է: Իսկ այդ նշանակում է՝ ուղղագրութիւնը իր կիրառմամբ յարատեւական է, անսահմանափակ՝ ժամանակային առումով, մինչդեռ ուղղախօսութիւնը բառի արտաբերման ներկայ պահի հասարակականօրէն ընդունուած արտասանութիւնն է արտայայտում պարզապէս: Ինչո՞ւ է այդպէս: Բացատրենք.

Մատենագրութեան շնորհիւ տուեալ լեզուի բոլոր բառերը ընդունում են որոշակի տեսողական-թանձրացական կերպարանք: Յարահոյով գործածութեամբ այդ

բառերը գրութեան մէջ ձեռք են բերում կայունութիւն. նոյնիսկ այն փոփոխութիւնները, որ անզգալիաբար եւ դանդաղօրէն կատարուում են նրա կենդանի արտայայտութեան՝ արտասանուածքի մէջ, մինչեւ որոշ սահմաններում խզում առաջ չեն բերում գրութեան եւ արտասանուածքի միջեւ:

Բառերը գրութեան մէջ (տեքստում) բարձրաձայն կարգալիս մենք արտասանում ենք (կամ էլ լուռ ընթերցելիս ընկալում ենք) ոչ թէ ըստ նրանց կազմում պարփակած յաջորդական առանձին-առանձին տառերի հնչիւնական արժէքի եւ զուգորդման, այլ՝ ամբողջութեամբ մտապատկերային (գրաֆիկական) ընկալմամբ: Բացի դրանից, հոգեբանական երեւոյթ է, որ բառապատկերը մեր գիտակցութեան մէջ արթնացնում է հնչիւնական այն պատկերը, որը համապատասխանում է նրա ժամանակակից արտասանուածքին. ըստ որում անցեալում եթէ մեր մատենագրութեան մէջ արձանագրուած բառերը արտասանուել են այլ կերպ, լիովին գրութեանը համապատասխան ձեւով, ապա այդ միեւնոյն բառերը իրենց միեւնոյն պատկերով հայոց լեզուի զարգացման հետագայ շրջաններում՝ միջին հայերէնում եւ աշխարհաբարում արտաբերուել եւ արտաբերուում են ոչ թէ ըստ իրենց նախնական հնչիւնային արժէքի, այլ՝ համաձայն յիշեալ փոփոխում այդ բառերի ձեռք բերած նոր արտասանութիւնների: Այստեղից ընձեռուում է հնարաւորութիւն՝ մի կողմից բառերի գրութեան աւանդական պատկերի պահպանման, միւս կողմից՝ պատմական հնչիւնափոխութեան անկաշկանդ զարգացման...:

Յատկանշական է, որ ժԹ դարում ծաւալուած գրապայքարի ժամանակ եւ արեւմտահայ, եւ արեւելահայ աշխարհաբար գրական լեզուների դրօշակակիրներ-

րը, գրաբարի ձեւաբանութիւնից եւ շարահիւսութիւնից հրաժարուելու կոչ անելով հանդերձ, ամենէին ձեռք չտուին գրաբարի ուղղագրութեան համակարգին, որի հեղինակն է, ինչպէս վերը ասուեց, բացառապէս Մեծն Մաշտոցը: Նրանք գրաբարի փոխարէն աշխարհաբարը գրական լեզուի մակարդակին բարձրացնելու իրենց ձգտումով հանդերձ՝ պահպանեցին գրաբարի ուղղագրութիւնը: Եւ դա խելամիտ էր:

Հարց է ծագում. ինչո՞ւ նրանք ձեռք չտուին գրաբարի ուղղագրութեանը, որը իր համակարգով ամենեւին չէր արտացոլում ինչպէս արեւելահայ, այնպէս էլ, առաւել եւս, արեւմտահայ խօսակցական լեզուների համապատասխանութիւնները: Իրականում հարցի էութիւնն այն է, որ յիշեալ ժամանակաշրջանում նոյնիսկ գրաբար վերարտադրութեան ժամանակ չէր պահպանուել գրութեան հին արտասանութիւնը. այլ կերպ ասած՝ հէնց գրաբար գրելիս եւ ընթերցելիս էլ թէեւ գրութիւնը աւանդական, բայց արտասանութիւնը ժամանակակից էր (համաձայն արեւելահայ եւ արեւմտահայ արտաբերութեան): Գրաբար ուղղագրութեամբ գրուած բառապատկերը իր ձեւով արթնացնում էր հայի ուղեղում ոչ թէ հնչիւնական համապատասխան բառապատկերը, այլ այն հնչիւնապատկերը, որով արտասանուում էր տուեալ բառը հէնց այդ ժամանակաշրջանում: Օրինակ՝ յառաջ, յաղթանակ, յոյս, ոճ, ոսկի, երգ, եզն բառերը ոչ թէ արտասանուում էին գրաբարեան ձեւով, ինչպէս Ե դարում (yaraǰ, yaǰt'anak, yoys, oǰ, oski, erg, ezn եւ այլն), այլ ժամանակակից արտաբերութեամբ՝ haraǰ, haxthanak, hüys, voǰ, voski, yerkh, yezn եւ այլն:

Այս երեւոյթը ընդհանուր է մատենագրութիւն ունեցող բոլոր լեզուների համար: Այդ առումով ցայտուն օրինակ է ծառայում ժամանակակից անգլերէնը: Յայտնի է, որ չնայած անգլերէնի քերականական

կանական կառուցուածքի չափազանց պարզութեանը, Անգլիայում անգրագիտութիւնը համեմատաբար շատ է: Ինչո՞ւ բացատրել: Ի թիւս այլ պատճառների, կարեւոր է նկատել նաեւ այն, որ այդ լեզուում գրութեան եւ արտասանութեան միջեւ չափազանց մեծ անջրպետ գոյութիւն ունի. անգլիացին փաստօրէն պարտաւորում է համարեայ «երկու լեզու» միաժամանակ սովորել, ինչպէս ընդունուած է Լնդհանուր լեզուաբանութեան տեսութեան մէջ բնութագրել. մէկը՝ իր մայրենի լեզուի հնչիւնային արտաբերութիւնը, միւսը՝ նրա գրագիտական գրութիւնը, որի իւրացման համար պահանջուում է տքնաջան աշխատանք, սուր յիշողութիւն, յարատեւ կրկնուող վարժութիւններ՝ գիտակցութեան մէջ այն ամբարպետելու համար: Գրելիս անգլիացու ուղեղում անմիջապէս զարթնում է տուեալ բառի ոչ թէ բաղադրիչ տառերի հնչիւնական լիարժէք ամբողջականութիւնը, այլ հնչիւնական այն պատկերը, որը շատ կողմերով անյարիր է նրա գրութեանը: Իրաւացի է ուսու Եա. Գրոտը, երբ գրում է, թէ անգլիացին «չի ցանկանում իր խօսքի հնչիւնները գրութեամբ արտայայտել, այլ բաւարարում է բառերի գրագիտական կերպարներով, որոնք տեսողութեան միջոցով հաղորդում են դրանց համապատասխանող հասկացութիւնները»: Բանն այն է, որ անգլերէնում ստեղծուած գրութեան եւ արտասանութեան անջրպետը արդիւնք է՝ մի կողմից պատմական հնչիւնափոխութեան, միւս կողմից՝ աւանդական գրութեան պահպանման: Աւելացնենք նաեւ հեղինակի ասածին. դեռ լա՛ւ է, որ անգլիացին (կամ ամերիկացին), այնուամենայնիւ, գիտէ իր բառերի արտասանութիւնը. նա միայն պէտք է իւրացնի դրանց՝ գրութեան եղանակը: Մինչդեռ առաւել մեծ դժուարութիւն

պէտք է յաղթահարի օտարերկրացին, որն անծանօթ է անգլերէն բառերի եւ արտասանութեանը, եւ գրութեան ձեւին: Անշուշտ, դժուար է պատկերացնել, թէ ինչպէս հնարաւոր է եւ պէտք է արտասանել բառը նօ՝ երբ գրում է know (կնօւ), կամ օլ՝ երբ գրում է all (ալլ), հա՛ֆ՝ երբ գրում է half (հալֆ), ռայտ՝ երբ գրում է right (ռիգհտ) եւ այլն, ըստ որում իւրաքանչիւր տառ ոչ միայն տարբեր դիրքերում, այլեւ առանձին տարբեր բառերում եւ միեւնոյն դիրքերում արտասանում է իւրօրինակ ու տարբեր ձեւով: Նոյնիսկ առածի կարգ է անցել հետեւեալ ասոյթը՝ «Անգլիացին գրում է կոստանդնուպոլիս, բայց կարդում է՝ ... Լոնդոն»: Օրինաչափութեան փոխարէն անգլիացին ստիպուած յենում է աւանդոյթի եւ յիշողութեան վրայ, իսկ օտարերկրացին, անգլերէն սովորելիս, երբ դիմում է համապատասխան բառարաններին, այնտեղ իւրաքանչիւր բառի արտասանութեան համար հանդիպում է պայմանական նշանների կամ թուերի, որոնց հնչիւնական արժէքը ըմբռնելու համար դարձեալ պէտք է դիմի դրանց բանալուն (աղիւսակին): Այդ պատճառով անգլերէնի ուղղագրութիւնը ընդունուած է կոչել պատմական ուղղագրութեան առաւել ցայտուն եւ տիպիկ նմոյշ: Բայց եւ այնպէս անգլիացի բանասէր-լեզուաբաններից ոչ ոքի մտքով անգամ չի անցնում փոխել իր ազգային լեզուի ուղղագրութիւնը եւ հնչիւնական պարզունակ ու դիւրամատչելի գրահամակարգ որդեգրել...:

Այստեղից, ուրեմն, պէտք է եզրակացնել, որ կենդանի լեզուն իր հնչիւնական կողմով դանդաղօրէն եւ անզգալաբար, անընդհատ, բայց մարդու կամքից եւ գիտակցութիւնից անկախ, փոփոխութիւններ է կրում, ըստ որում հէնց որ այդ փոփոխութիւնները կատարում են

պատմական այս կամ այն ժամանակաշրջանում, մարդկային կամքը դարձեալ անզօր է խանգարել դրանց տարածմանն ու ծաւալմանը: Այդ առթիւ գերմանացի անուանի լեզուաբան եւ հայագէտ Հ. Հիւբշմանը հետեւեալ բնորոշ միտքն է յայտնում «Հանդէս ամսօրեային» ուղղած իր նամակում. «Լեզուաց այս (հնչիւնային - Լ. Խ.) փոփոխութիւնն՝ խօսողին կամքէն բոլորովին անկախ է, առանց գիտակցութեան՝ յընթացս դարուց սերնդէսերունդ անցնելով կը կատարուի: Բայց մէյ մ'որ այսպիսի փոփոխութիւն յառաջ գայ, այնուհետեւ մարդկային կամք մը կարող չէ գայն բառնալ, ինչպէս որ մարդկային կամք մը յառաջ չէ բերած» (1888, Յուլիս, էջ 122):

Լեզուի բնական եւ պատմական հնչիւնափոխութիւնը խախտում է գրութեան հնչիւնային դրութիւնը: Սակայն, ինչպէս ցոյց է տալիս լեզուների ուղղագրութեան պատմութիւնը, անթոյլատրելի է եւ հնարատր էլ չէ ամէն անգամ, լեզուի կրած հնչիւնական փոփոխութիւնների համաձայն, փոխել նաեւ ուղղագրութիւնը՝ ապահովելով նրա հնչիւնական յարատեւ դրութիւնը: Դրան խանգարում է, առաջին հերթին, այն հարուստ մատենագրութեան առկայութիւնը, որ ստեղծել է տուեալ ժողովուրդը նախընթաց դարերում, երբ գրութիւնը համապատասխանել է արտասանութեանը՝ արտացոլելով տուեալ լեզուի հնչիւնական դրութիւնը: Հրաժարուել իր հոգեւոր ժառանգութիւնից օգտուելու հնարաւորութիւնից՝ ոչ ոք չէր համաձայնի: Բացի դրանից, պատմական հնչիւնափոխութեան պատճառով շատ բառեր դառնում են նաեւ նոյնահունչ, բայց իմաստով՝ տարբերակուած համանուններ: Նրանց բառիմաստային տարբերակման, հետեւաբար նաեւ բառային առանձին միաւորներ ճանաչուելու

միակ հիմքը մատենագրութեան մէջ հանդիսանում է այդ բառերի միայն տարբեր (աւանդական) գրութիւնը: Տուեալ դէպքում աւանդական ուղղագրութիւնը պատճառ է դառնում լեզուի մէջ բազմաթիւ նոյնանունէ բառերի պահպանմանն եւ յարատեւման: Միայն գրութեան տարբեր ձեւերի շնորհիւ անմիջապէս ակնբախ է դառնում, դիցուք, հետեւեալ նոյնահունչ բառերի իմաստային տարբերակումը եւ միաժամանակ բառային առանձնակի արժէքները. սէր (իբրեւ սիրել բառի արմատ եւ գոյական անուն) եւ սեր (կաթի սեր), գէտ (Արաքս գետը) եւ գէտ (իբրեւ գիտեցաւ բառի արմատը), հոտ (բուրմունք) եւ հոտ (ոչխարների հոտը), հոր (փոս տեղ) եւ հոր (հայր բառի սեռական-տրական ձեւը) եւ այլն:

Ճրանսերէնում աւելի շատ բնորոշ օրինակներ կան. դիցուք՝ *sot* («տխմար»), *saut* («ցատք», «ցատկում») *sceau* («կնիք»), *seau* («դոյլ») բառերը հաւասարապէս նոյն ձեւով են արտասանւում (իբրեւ *so*), բայց համարւում են բառային առանձին միաւորներ: Այս փաստերը ցոյց են տալիս, որ ուղղագրութիւնը երբեմն վճռական դեր է խաղում այս կամ այն բառի տարբերմանն եւ պահպանմանն գործում: Նոյնիսկ քերականական կառուցուածքում, յատկապէս՝ ձեւաբանական իրողութիւնների դրսեւորման մէջ, առանձին լեզուներում ուղղագրութիւնը առաջնահերթ դեր է կատարում. մատենագրութեան մէջ ձեւաբանական առանձին իրողութիւնների տարբերակման միջոց է ծառայում նաեւ ուղղագրութիւնը: Դարձեալ, օրինակ, Ֆրանսերէնում անձնական դերանունան 3-րդ դէմքի եզակին եւ յոգնակին տարբերակւում է միայն գրութեամբ եւ ոչ թէ արտասանութեամբ. *il* եւ *ils* (երկու դէպքում էլ արտասանւում է ի, իսկ յոգնակիի *s* ցուցիչը սոսկ գրաֆիկական

նշանակութիւն ունի): Բայի սահմանական եղանակի 3-րդ դէմքի եզակի եւ յոգնակի թուերը դարձեալ միմեանց հակադրւում են միայն գրութեամբ, եւ ոչ թէ արտասանութեամբ. *il cherche* եւ *ils cherchent* (=իլ չերչ), *il parle* եւ *ils parlent* (=իլ պառլ): Բերուած փաստերից հետեւում է, որ ուղղագրութիւնը առանձին լեզուներում գրաւոր հաղորդակցման մէջ բառային եւ նոյնիսկ քերականական իրողութիւններ դրսեւորելու էական միջոց կարող է հանդիսանալ: Ինքնին հասկանալի է, որ բանաւոր հաղորդակցութեան ժամանակ ուղղագրական յիշեալ երեւոյթները ոչ մի դեր չեն կարող խաղալ: Համահունչ բառերի եւ քերականական ձեւերի տարբերակման համար բանաւոր խօսքում կարելի է նշանակութիւն ունենալ շեշտայնութիւնը, խօսքային իրադրութիւնը, բառերի ներքին կապակցութիւնը, դիրքը եւ այլն: Բայց, միւս կողմից՝ եթէ Ֆրանսերէնը, ուղղագրական ռեֆորմ կատարելով, հետեւի հնչիւնական դրութեան, ապա նոյնահունչ տարբեր բառերի միատեսակ գրութեան պատճառով անհասկանալի կը լինի նոյնիսկ Ֆրանսիացիների համար, հետեւաբար եւ՝ իսպառ կ'ոչնչացուեն այդ բառերի զոյգերը, որ, անտարակոյս, աղքատացման կը յանգեցնէր գիտութեան եւ մշակոյթի համաշխարհային համբաւ վայելող այդ հիասքանչ լեզուն...:

Դեռեւս ժի՞ դարի վերջում, երբ հայագիտական հանդէսներում («Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Արարատ» եւլն) քննւում եւ արծարծւում էին հայերէնի ուղղագրութեան հարցերը, հայագէտներից ոմանք չէին ըմբռնում արեւմտահայ եւ արեւելահայ գրական լեզուների տարբեր արտասանութեան բնոյթն ու նշանակութիւնը, նրանց առաջացման եւ զարգացման հիմքում եղած բնապատմական անհրաժեշտութիւնը: Օ-

րինակ՝ վաստակաշատ բանասէր Բարսեղ Սարգիսեանը «Բազմավէպում» այն թիւր կարծիքն է յայտնում, որ արեւմտահայերէնի արտասանութեան խօսքը վերաբերում է բաղաձայններին, երբ ձայնեղները խլացել են, իսկ խուլերը՝ ձայնեղացել, ուստի եւ միայն երկաստիճան բաղաձայնական դրութիւն ունեն, ի հեճուկս արեւելահայերէնի, որ պահպանել է դասական դրութիւնը), իբր, կամայականութեան կամ ենթակայական հանգամանքի արդիւնք է: Ելնելով այս սխալ բացատրութիւնից՝ նա պահանջում է, որ արեւմտահայ գրողները «զոհագործութիւն» անեն նոր փոխառուող բառերի տառադարձութեան հարցում եւ ընդունեն արեւելահայերի տառադարձութիւնը, որն, ըստ էութեան, աւելի մօտ է կանգնած մեսրոպեան արտասանութեանը: Միւս կողմից՝ նա հակուած է ընդունելու, որ իբր մեսրոպեան ուղղագրութեան (իր տերմինով՝ «յարմարագրութեան») հետագայ փոփոխութիւնը (պատմական հնչիւնափոխութեան առումով) արդիւնք է ոչ թէ կենդանի արտասանութեան փոփոխութեան, այլ բուն իսկ ուղղագրութեան «աղաւաղման»: Այդ կապակցութեամբ նա կշտամբում է նաեւ արեւելահայ այն թերթերին, որոնք գտնւում են, որ գրութեան այլակերպ արտասանութիւնը հետեւանք է պատմական հնչիւնափոխութեան. «Արդեօք հնչման կամ կենդանի արտասանութեանց աղաւաղութիւնն եղած է սկզբնապատճառ նախնեաց հինաւորցյարմարագրութեան աղաւաղման, - հարցնում է նա, - թէ՞ ընդհակառակն, յարմարագրութեան աղաւաղութիւնը համարելի է սկզբնառիթ մեսրոպեան տառից արտասանութեան աղաւաղութեանը: Ըստ բողոքարկութեան ուսասհայ լրագրաց՝ իբր թէ առաջինն եղած լինի սկզբնապատճառ վերջնոյն» (Բ. Սարգիսեան, Տե-

սութիւն տառադարձութեան խնդրոյն, «Բազմավէպ», 1889, Յունիս, էջ 161): Պատասխանելով Բ. Սարգիսեանի նման մտածողներին՝ Հիւբշմանը միանգամայն իրաւացի կերպով իր վերոյիշեալ նամակում գրում է. «...Ամենեւին օգուտ չունենար, եթէ արեւմտեան Հայք Տփղիսեցոց պահանջմանց հետեւելով հին արտաբերութեան դառնալու որոշումն ընեն. վասնզի անկարելի է» («Հանդէս ամսօրեայ», 1888, էջ 122): Հիւբշմանի կարծիքով՝ մի քանի արեւմտահայեր, բնակուելով Թիֆլիսում, անշուշտ, կը կարողանային նրանց արտաբերութիւնը իւրացնել. սակայն «երկու միլիոն» զանգուածը պիտի շարունակէր բառերն արտաբերել իր արտասանական դրութեան համաձայն. «Լեզուագիտական տեսակէտով՝ Տփղիսի պահանջմունքը չեմ կրնար իրաւացի դատել, - շարունակում է նա: - Հնամենի (*Das Alterhümliche* - նկատի ունի մեսրոպեան հայերէնը - Լ. Խ.) արժէք ունի լեզուագիտութեանը՝ բայց ոչ երբէք խօսողներու համար» («Հանդէս ամսօրեայ», անդ):

Այնուհետեւ հնչիւնական փոփոխութիւնները հասնում են իրենց զարգացման այնպիսի մի կէտի, երբ միեւնոյն պայմաններում նոյն տիպի բառերը, իրենց ներգործութեանը ենթարկելով, վեր են ածւում հնչիւնական օրէնքի: Նկատենք, որ հնչիւնական օրէնքները գործում են զարմանալի կանոնաւորութեամբ եւ ճշգրտութեամբ, որոնց ուսումնասիրութիւնը բացառիկ նշանակութիւն ունի տուեալ լեզուի պատմութիւնը գիտականօրէն լուսաբանելու, նրա ծագումնաբանական ցեղակցութիւնը պարզելու, զարգացման տարբեր փուլերի ճիշդ պարբերացումը կատարելու տեսակէտից: Ենթադրու է այն բանի, որ Հիւբշմանը հիանալի կերպով հետազօտեց դասական հայերէնի հնչիւնական համակարգում գործող օ-

րէնքները, խոշոր գիւտ կատարեց՝ պարզելով հայերէնի տեղը հնդեւրոպական լեզուաընտանիքում միանգամայն սպառիչ կերպով ապացուցելով, որ հայերէնը ոչ թէ իրանական ճիւղի մի բարբառ է, ինչպէս մինչ այդ ընդունուած էր հնդեւրոպաբան Աշանատր լեզուաբանների կողմից (Բոպպ, Գրիմ, Վինգելման, Մաքս Միլլեր եւ ուրիշներ), այլ հնդեւրոպական առանձին անկախ մի լեզու (տե՛ս նաեւ Հիւբշմանի հետեւեալ աշխատութիւնները. «Über die Stellung des Armenischen in Kreise der indogermanischen Sprachen», 1875, «Zür Chronologie der Arm. Vocalgesetze», 1898, «Armenische Grammatik», հտ. 1, 1895, հտ. 2, 1897, Leipzig: Տե՛ս նաեւ Էդ. Աղայեան, «Լեզուաբանութեան հիմունքներ», Երեւան, 1987, էջ 277-288:

Իոզէֆ Կարստի՝ կիլիկեան միջին հայերէնի հնչիւնական օրէնքների բացատրական շնորհիւ, այսօր մենք պատկերացում ունենք հնչիւնական այն տեղաշարժերի մասին, որ կրել է հայերէնը իր զարգացման տուեալ փուլում (Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901): Փրոֆ. Հր. Աճառեանը, հայոց լեզուի զարգացման տարբեր փուլերում գործող հնչիւնական օրէնքների հմուտ ուսումնասիրման շնորհիւ, կարողացաւ ամենայն մանրակրկիտութեամբ եւ սպառիչ կերպով հետազօտել հայերէնի բառագանձը, ինչպէս նաեւ տալ հայոց լեզուի պատմութեան առաջին յաջող փորձը:

Հետեւաբար պայման չէ ամենաինչ, որ ուղղագրութեան եւ ուղղախօսութեան համապատասխանութիւնը պարտադիր լինի բոլոր ժամանակներում ու դէպքերում: Այդ իսկ պատճառով՝ անմտութիւն կը լինէր ամէն անգամ պահանջել, սոսկ ուղղախօսութեան թելադրանքով, որ ուղղագրութեան «բարեփոխումներ» իրականացուեն հնա-

գոյն մատենագրութիւն ունեցող ժողովուրդների գրութեան համակարգում:

Ուղղագրութիւնը սերունդների ստեղծած գրական ժառանգութեան պահպանողն է եւ բացառապէս միակ պահպանող:

Չլինէր ուղղագրութիւնը՝ կը կորչէր եւ պատմութեան անյայտութեան մշուշում կը սուղուէր դարերի իմացական այն հարստութիւնը, որի միակ ժառանգորդներն են հետագայ հայորդի սերունդները եւ... մարդկութիւնը միաժամանակ:

Եւ իսկապէս հետաքրքրական է իմանալ՝ ի՞նչ է ցոյց տալիս Հայոց լեզուի բազմադարեան զարգացման պատմութիւնը մաշտոցադիր ուղղագրութեանը վերապահուած երախտարժան այս դերի առնչութեամբ:

Հաստատենք. բացառապէս Ե դարում էր միայն, որ առաջին անգամ գրի առնուող հայոց կենդանի լեզուն իր ուղղագրութեամբ եւ ուղղախօսութեամբ միանգամայն աներաշնակ էր բացարձակ համապատասխանութեամբ: Եւ դա ինքնին հասկանալի է:

Նման գոյալիճակը, սակայն, յարատեւեց մինչեւ Բագրատունեաց թագաւորութեան անկումը (ԺԱ դար), երբ ժամանակի յարահողով եօթ հարիւրամեակների ընթացքում աննկատելիօրէն հնչիւնական-արտասանական որակական փոփոխութիւններ արձանագրեց Հայոց լեզուն, որով եւ խախտուեց ուղղագրութեան եւ ուղղախօսութեան համապատասխանութիւնը: Իսկ ԺԲ եւ մանաւանդ՝ ԺԳ դարերի գրաբարը արդէն խօսակցական լեզու էր. նա իր գոյութիւնը շարունակում էր իբրեւ գիտութեան լեզու եւ կամ սահմանափակում էր եկեղեցում կամ վանքի պատերի մէջ: Այդ ինքնին նշանակում է՝ ուղղագրութիւնը եւ ուղղախօսութիւնը արդէն չէին համապատասխանում իրար, չէին ծածկում միմեանց:

Հարց է ծագում. ինչպէ՞ս վարուեցին ժամանակուայ մեր գրաւոր մշակոյթի ներկայացուցիչները՝ վարդապետները, ուսուցչապետները եւ վաստակաւոր գրիչները: «Բարեփոխեցի՞ն» մաշտոցադիր հայոց ուղղագրութիւնը: Ամենեւին էլ ոչ, միանգամայն անաղարտ պահեցին այն: Ուզենային էլ՝ չէին կարող «բարեփոխել», որովհետեւ այլապէս խաչ կը քաշէին գրաւոր արտայայտութեամբ մտաւորական Աստուծոյ սերունդների ամբողջ մատենագրական ժառանգութեան եւ առաջին հերթին մաշտոցեան գրական շարժման վրայ, որպիսի ծանրագոյն մեղանշում՝ ոչ մէկի մտքով անգամ անցկացնել պարզապէս անհնարին էր...:

Ապա ինչպէ՞ս վարուեցին: Առաւել երկիրաժողովում ու սրբութեամբ փարուեցին մաշտոցադիր հայոց ուղղագրութեան կանոնների անսայթաք գործադրման պահանջներին, միաժամանակ հայերէնագիտական բանասիրական հետազօտումների ձեռնամուխ լինելով՝ տեսական աշխատութիւններ հեղինակեցին՝ հանգամանօրէն բացատրելով ու հիմնաւորելով ուղղագրական կանոնների կիրառման ճշգրտագոյն օրինաչափութիւնները...:

Այսպէս, հայոց լեզուի պատմութիւնից յայտնի է, որ ԺԲ-ԺԳ դարերում գործածուող հայերէնը շատ էր հեռացել գրաբարի դասական վիճակից. հետեւաբար այս շրջանում կիրառուող գրաբարը բոլորովին էլ այն չէր, ինչ Դ-Ե դարերում հայ ժողովրդի շուրթերի վրայ թրթռացող լեզուն: Որքան էլ միջնադարեան հեղինակները աշխատում էին գրել հայ պատմիչների ու մատենագիրների դասական լեզուով, այդ նրանց չէր յաջողուում. պատճառն այն է, որ նրանք գրաբար գրում էին իբրեւ սովորովի մի լեզուով, ուստի եւ իւրաքանչիւր միջնադարեան հեղինակի բարբառային լեզուա-

ճԺԳ-1999

մտածողութիւնը, քերականական ձեւերն ու արտայայտչական միջոցները թափանցում էին նրա գրաւոր արտադրանքի մէջ: Դեռեւս Բագրատունեան շրջանի (ԹԺԱ դդ.) գրաբարի մասին Ա. Այտընեանը իր դարագլուխ կազմող «Քննական քերականութեան» մէջ այն կարեւոր տեսակէտն է յայտնում, որ գրաբարը «իրօք գրաբար էր (= ոչ խօսակցական, դժուարըմբռնելի, միայն գրով ընթերցուող)» նաեւ այն շրջանի հայերի համար. «Միջին դարուն վերջերը եւ մասնաւորապէս՝ Բագրատունեաց ժամանակները, երբ արդէն մեր գրաբարը իրենց ալ իրօք գրաբար էր, ձեւացած էր կերպաւորեալ աշխարհաբար լեզու մը» (անդ, էջ 140):

ԺԲ-ԺԳ դարերում գրաբարի խօսակցական լեզու չլինելու, գրքունակ եւ սովորովի բնոյթ կրելու վերաբերեալ, ի շարս բազմաթիւ մատենագրական վկայութիւնների, ունենք նաեւ մի ծանրակշիռ փաստ. յիշեալ ժամանակաշրջանում հանդէս են եկել մի շարք հեղինակներ, որոնք իրենց ստեղծագործութիւններում գործածել են ինչպէս գրաբար, այնպէս էլ միջին հայերէն խօսակցական լեզուն, ընդ որում յատկանշական է, որ միեւնոյն հեղինակը, երբ փորձում է զուտ վերացական, իմաստասիրական, գիտական կամ աստուածաբանական խնդիրներին նուիրուած աշխատութիւններ գրել, դիմել է միայն գրաբարին, իսկ այն դէպքում, երբ նա աշխարհիկ, ժողովրդական բնոյթի, ընդհանուր հասարակական հետաքրքրութիւն առաջացնող, գործնական նշանակութիւն ունեցող անմիջական եւ որոշակի հարցերի շուրջ երկեր է գրել, դիմել է միջին հայերէնին: Այսպէս են վարուել, օրինակ, Ներսէս Շնորհալին, Ներսէս Լամբրոնացին, Վարդան Արեւելցին եւ ուրիշներ: Այդ նշանակում է, որ ժողովուրդը այլեւս գրաբար չէր հասկա-



նում, իսկ հեղինակը իր մտքերը նրան հասանելի եւ ըմբռնելի դարձնելու համար պէտք է հրաժարուէր գրաբարից եւ կիրառէր այն լեզուն, որով խօսում էր նա տուեալ ժամանակաշրջանում:

Բայց եւ մաշտոցադիր ուղղագրութիւնը անաղարտ պահելու պարտաւորութիւնն ունէին միաժամանակ: Քաջ գիտակցում էին, որ ուղղագրութիւնը սոսկ յարմարագրութիւն չէր, այլ առաջին հերթին եւ գլխաւորապէս՝ դարերի ու հազարամեակների գրատր հաղորդակցութիւնների կապող կամուրջն էր սերունդների: Բանն այն է, որ ուղղագրութիւնը իր միասնական համակարգի նաեւ գրական լեզուների տարբեր շրջանները (ինչպէս ազգի տարբեր հատուածները) իրար կապող եւ զօղող կարեւորագոյն օղակ է, որը հնարաւորութիւն է տալիս նախորդ դարաշրջանների հոգեւոր արտադրանքները փոխանցել նաեւ հետագայ սերունդներին, նաեւ միմեանց միջեւ արդի ժամանակներում՝ անկախ տարածքային որեւէ հեռաւորութիւնից...: Սրանից պէտք է եզրակացնել, որ մատենագրութեան զարգացման համար անհրաժեշտ է ոչ միայն գրաւոր կերպարանք տալ հնչիւնային լեզուին, այլեւ գրութեան կանոնաւոր եւ միասնական համակարգ՝ ուղղագրութիւն մշակել:

Իրականում՝ բուն իսկ գրական լեզուի միութիւնը հնարատր է պահպանել միայն շնորհիւ միակերպ ուղղագրութեան: Ուղղագրութեան ընդհանուր եւ տեւական միասնականութիւնը անհրաժեշտ պայման է ընդհանուր գրական լեզուի համար: Խնդիրն այն է, լեզուաբանական տեսութեան թելադրանքով էլ, որ իւրաքանչիւր գրական լեզուի զարգացման համար միասնական քերականութեան հետ ենթադրուում է նաեւ գրութեան միակերպ ու միասնական համակարգ, որը ընդունելի եւ պարտադիր պէտք է լինի նոյն լեզուով խօսող

ամբողջ հասարակութեան համար: Նկատենք նաեւ, որ բազմաթիւ բարբառներ եւ ենթաբարբառներ ունեցող լեզուի տարածքային տարբեր ներկայացուցիչները գրաւոր կերպով հաղորդակցելիս օգտուում են գրական լեզուի միակերպ ուղղագրութիւնից: Այս հանգամանքը, իր հերթին, հնարատրութիւն է ընձեռում գրական լեզուի գործառնութեան ընդարձակման ու տարածման համար, դրանով էլ մեծ ոյժ է կենսունակութիւն հաղորդում գրական լեզուի ծաղկմանը: Այստեղից էլ անհրաժեշտութիւնը հայ մատենագրութեան դասական շրջանի Յուշարձանների, մանաւանդ՝ «Թարգմանիչների» երկերի բանասիրական խորաքննիչ հետազօտութիւնների անհրաժեշտութիւնը, որով եւ ստեղծուեցին «Գրչութեան արուեստի» լեզուական-քերականական-ուղղագրական-գրադարձական առանձին «Ուղեցոյցերի» մի շարք բնագրեր, որոնք ապահովեցին ձեռագիր մատենաների գրադիտական բարձրորակ ընդօրինակումները եւ դրանց ընթերցման միասնական կանոնների՝ ուղղագրութեան անընդհատականութիւնը: Այդ բնոյթի աշխատութիւններից են՝ Արիստակէս Գրչի «Վերլուծութիւնք բացերեւապէս բազմազան բառից եւ բայից», Գէորգ Սկեւռացու ա. «Խրատ վասն հանգամանաց հեգից», բ. «Խրատ վասն հանգամանաց հեգից», գ. «Խրատ վասն առգանութեանց», դ. «Խրատ գրչութեան», Գրիգոր Տաթեւացու՝ ա. «Լուծումն համառատ դժուարիմաց բանի ի գիրս գրչութեանն յԱռիստակիսէ Հռետորէ», բ. «Համառատ ի խրատ գրչութեան Գէորգայ վարդապետի», գ. «Դարձեալ խրատ նոյն Գէորգ վարդապետի որ առ Ստեփաննոս Գոյներիցանց գրեալ Յաղագս գրչութեան արուեստի» երկերը, որ մենք առանձին գրքում գիտա-քննական համեմատութեամբ եւ ծաւալուն ուսումնասիրու-

թեամբ հրատարակեցինք դեռեւս 1962 թ. Երեւանում (410 էջ), Մատենադարանում տարիներ շարունակ հայագիտական հետազօտութիւններ կատարելիս: Բնագրային այդ աղբիւրները, իբրեւ դասընթացներ, դարեր շարունակ դասաւանդուել են միջնադարի մեր վարդապետարաններում, ձեւարաններում, ակադեմիաներում եւ համալսարաններում, մանաւանդ գրչութեան կենտրոններում՝ Հայերէնագիտութիւնը անխաթար պահելով: Նկատենք, որ մեր գրապայքարի առաջամարտիկները ժԸ եւ ԺԹ դարերում լաւ էին պատկերացնում ուղղագրութեան չափազանց կարեւոր նշանակութիւնը մատենագրութեան զարգացման տարբեր փուլերի շաղկապման եւ նրանց միասնութեան պահպանման գործում: Միւս կողմից՝ նրանք հաշուի էին առնում այն խիստ բնորոշ եւ իւրայատուկ իրադրութիւնը, որ ներկայացնում էր այդ ժամանակ հայ ժողովրդի տարբեր հատուածների (ե՛ւ արեւելահայ, ե՛ւ արեւմտահայ աշխարհաբարների, ինչպէս նաեւ բարբառային խօսուածքների) արտասանութեամբ իրենց առանձնայատկութիւնների խայտաբղէտութեամբ ու հակադրութեամբ. բացակայում էր արտասանութեամբ միասնութիւնը: Այս հանգամանքը առաւել հրամայաբար պարտադրում էր գրապայքարի տեսաբաններին պահպանելու հայերէնի աւանդական ուղղագրութիւնը, որն իր տեսութեամբ ու կանոններով հիմնականում մշակուել էր ուսումնասիրուել էր, ինչպէս վերը ասուեց, դեռեւս ԺԲ-ԺԳ դարերում գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութեան հիմնադիրների կողմից. գրութիւնը պիտի լինէր գրաբարեան, բայց արտասանութեամբ՝ իրովի, իրաքանչիւր հատուածի խօսակցական լեզուի եւ բարբառի արտաբերմանը համապատասխան:

Գրապայքարի ուսուցիչները ճիշդ կերպով ըմբռնում էին, որ եթէ մի կողմ

թողնելով գրաբարեան աւանդական ուղղագրութիւնը եւ ուղղագրական ուսուցիչութիւնը՝ ընդունէին միայն հնչիւնական դրութիւնը, աշխարհաբար երկու գրական լեզուների միջեւ կը ստեղծուէր անանցանելի մի անջրպետ. գրաւոր հաղորդակցութիւնը այնքան կը դժուարանար, որ երկու հատուածների ներկայացուցիչները, առանձին դէպքերում, հազիւ թէ միմեանց մտքերը կը կարողանային կարգաւ եւ հասկանալ: Այդ նշանակում է, որ գրաբարեան ուղղագրութիւնը, իր կանոնների որոշ խրթնութեամբ ու բարդութեամբ հանդերձ, մեր աշխարհաբար երկու գրական լեզուների կազմաւորման եւ սնուցման ուղղութեամբ դրական կարեւոր դեր է խաղացել: Աւելին՝ նոյնիսկ Մ. Աբեղեանի կարծիքով՝ «... գրաբարի աւանդական գրութիւնը, որ ընդունել են ամենուրեք, մի անհրաժեշտ միջոց է եղել աշխարհաբար առաջ բերելու համար...» (Մ. Աբեղեան, Մեր ուղղագրութեան մասին, «Արարատ», 1913, 11, էջ 1056-1057):

Նոյն հեղինակը մինչեւ անգամ հարկադրուած է ընդունել, որ մեր արդի գրական լեզուների գոյութիւնը պայմանաւորուած է հինգ գրաբարի ուղղագրութեամբ. «Շատ անգամ յայտնուած ճշմարտութիւն է, - գրում է նա, - որ աշխարհաբար չէր կարող այնպէս արագ զարգանալ, եթէ չլինէր գրաբարը: Բայց պէտք է ընդունել եւ այն, որ եթէ չլինէր գրաբարի ուղղագրութիւնը, մենք դժուար թէ ունենայինք մեր արդի գրական լեզուն, եւ մեր երկու աշխարհաբարներն այնքան հեռու կը լինէին իրարուց, որ կը կարդայինք, բայց դժուար կը հասկանայինք, առանց առաջուց առանձնապէս սովորած լինելու» (անդ, էջ 1057). մի ճշմարիտ խոստովանութիւն, որ ոյժը պահեց ու պահպանեց հետագայ բոլոր ժամանակներում, այդ թւում ներկայումս եւ, առաւել եւս, ապագայում... այն էլ Աբեղեանի իսկ հաւաստմամբ:

Բայց կեանքի հեզնանքն էլ այն է, որ տրամագծորէն միանգամայն հակառակը կատարեց այս նոյն հեղինակը 1922 թուականին իր առաջարկած ուղղագրական «ռեֆորմով», որ մինչեւ անգամ առաջին Հայկեանքից անհաւատալի է թուում նման ձախաւեր շրջադարձը... Այս մասին՝ քիչ յետոյ:

Հարկ է արձանագրել նաեւ, որ մեր լեզուն եւ գրականութիւնը միաժամանակ հայ ժողովրդի գոյապայքարի եւ յարատեւման պայաւէնն ու յուսալի երաշխիքն են եղել, ընդ որում բոլոր ժամանակներում եւ տարապայման բոլոր հանգամանքներում:

Դարձեալ յետադարձ թուոցիկ Հայկեանք գցելով մեր պատմութեան վերջին հանգուցային հանգրուանների վրայ՝ ապա տեսնում ենք, որ 1918 թուականի Մայիսի 28-ին երկուներով ու գերմարդկային տառապանքով, մանաւանդ՝ Սարգարապատի հերոսամարտով հրաշանման ծնունդ առած Հայաստանի առաջին Հանրապետութեան առաջնակարգ խնդիրներից է եղել՝ «հայացնել» բոլոր պետական հիմնարկները՝ իրենց գրագրութիւնների բոլոր գործառնութիւններով՝ վերելից ներքեւ, համընդհանուր եւ ամբողջական ընդգրկումով, առանց բացառութեան՝ նախապատուութեամբ կառավարական պաշտօնները տրամադրելով նախեւառաջ Հայեցի կրթութիւն ստացած Հայորդիներին (տե՛ս Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Բ տպագր., Թեհրան, 1982, էջ 351-352):

1920 թուականի Նոյեմբերի 29-ին Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատմամբ եւ հետագայ շուրջ եօթ տասնամեակներում՝ ընդհանրապէս բարենպաստ նոր իրադրութիւն ստեղծուեց Հայոց լեզուի եւ գրականութեան հեռանկարների համար. համարեայ ազգա-

յին եկամտի մէկ երրորդը տրամադրուեւ էր ժողովրդի լուսաւորութեանը՝ դպրոցների, բարձրագոյն կրթութեան կենտրոնների, համալսարանների եւ ակադեմիայի ինստիտուտների կազմակերպմանն ու անխափան գործունէութեանը, որ աննախադէպ էր մինչեւ անգամ տիեզերական չափանիշով...: Ջարգացման նոր շրջափուլ թեւակոխեց Հայ ժողովրդի հոգեւոր մշակոյթն առհասարակ՝ գրականութեան, արուեստների ու գիտութիւնների ծաղկման, աննախընթաց վերելքի ու բուռն թափի հետ մէկտեղ մասնաւորապէս: Խնդիր էր դրուած, իբրեւ անյետաձգելի անհրաժեշտութիւն՝ հայ հասարակութեան բոլոր անդամներին դարձնել գրագէտ, քաղաքակիրթ եւ գիտակից:

Գրագիտութիւնը ամենակենսական եւ հրատապ պահանջներից մէկն էր, որի բարեյաջող լուծումով էլ պայմանաւորում էին նաեւ Հայ ժողովրդի հանճարի փայլատակման ու հոգեւոր հարստութեան արտակարգ ժայթքումը: Պետական լեզուն Սահմանադրութեամբ նոյնպէս հռչակուեց հայերէնը՝ թէեւ կիրառման ոչ ամբողջական ծաւալով, բայց եւ մանաւանդ այն դարձաւ գիտութեան եւ արուեստների լեզու, որով այնուամենայնիւ Հայոց լեզուի գործառնոյթները կեանքի բազմաթիւ ու բազմազան ոլորտներում անհամեմատ ընդարձակուեցին, եւ դարերի խորքից մեզ հասած Հայոց լեզուն իր արեւելահայ գրական տարբերակով առնականաւորու, կոփուելու եւ գեղեցկանալու մեծ հնարաւորութիւն ձեռք բերեց:

Տարաբախտաբար, սակայն, այս բոլորը նաեւ գայթակղութիւն առաջ բերեց Հայաստանի պետական ոլորտներում որոնումներ կատարելու հայերէնի բազմադարեան աւանդական ուղղագրութեան «բարելւուման» այնպիսի ուղիների համար, որոնք մեծապէս «հեշտացնէին»

գրաճանաչութեան եւ գրագիտութեան ընդհանրացման գործը բացառապէս Խորհրդային Հայաստանի տարածքում: Չէ՞ որ դա այնքան էլ մեծ բան չէր ստաւինիզմի ազգային-մշակութային քաղաքականութեան համար, երբ պարտադրուեւ էին այս կամ այն չափով մատենագրութեան վաղեմութիւն ունեցող ազգերին՝ հրաժարուել իրենց սեփական այբուբենական համակարգերից եւ ընդունել... ուսականը: Բացի դրանից, ի՞նչ արտառոց բան կայ, երբ նոյնիսկ ուրիշ ազգութեան պատկանող հնամենի քաղաքը միացնելով այս կամ այն հանրապետութեանը՝ հարկադրուեւ էին ընդունել եւ, բնականաբար, զգացմունքներ տածել նրա նկատմամբ իբրեւ... «սեփական» մայրաքաղաքի:

Բայց հայերէնի մաշտոցեան ուղղագրութեան համակարգի փոփոխման նման բացատրութիւնը հրամցուած էր հայ հասարակայնութեանը՝ իբրեւ «հիմնաւորում» եւ «արդարացում» ուղղագրական ռեֆորմների «անհրաժեշտութեան»՝ մի կողմից, միւս կողմից՝ հապճեպ կերպով այն պետական հրամանագրով իջեցուած «օրէնքի ոյժ» ունեցող իբրեւ պարտադիր հրամանաւորում, առանց հանրային քննարկման եւ համազգային համաձայնութեան...: Բանն այն է, որ մաշտոցեան աւանդական միասնական ուղղագրութեան ուսուցումը պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով իրօք կապուած է իւրացման որոշ դժուարութիւնների յաղթահարման հետ, ինչպէս ամէն մի վաղեմի մատենագրութիւն ունեցող լեզուների պարագան է, ուստի եւ պահանջում է հայրենագիտական քննակա՛մ վերլուծական-ստուգաբանական եւ մտապահական յամառ, բայց եւ շնորհապարտ լեզուաիմացութիւն:

Խոստովանենք՝ պաշտօնական վարկա-

ծին՝ ուղղագրական ռեֆորմների «հիմնաւորման», հարկադրաբար մենք եւս տուրք ենք տուել դեռեւս 1962 թուականին վերը նշուած «Գրչութեան արուեստի լեզուական-քերականական տեսութիւնը միջնադարեան Հայաստանում» մեր աշխատութիւնում (տե՛ս 47-52 էջերը):

1922 ԹՈՒԱԿԱՆԻ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ԶԱԽԱԻՆՈՒ ՈՒՂԱԳՐԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ԵՒ 1940 ԹՈՒԱԿԱՆԻ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՐԵՓՈՒՍԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ, ՈՐ ԱՅԼԱՊԷՍ ԿՈՉՈՒՄ Է «ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ»

1922 թուականի Մարտի 4-ին ընդունուած կառավարական օրէնքով ու վարչարարական կիրառմամբ կատարուեց ուղղագրական առաջին ռեֆորմը յօգուտ հնչիւնական դրութեան: Համազգային հիմնահարցը յանցաւոր հատուածամոլութեամբ «լուծեց» ահաւոր խեղումներով եւ հետեւանքային ծանրագոյն ողբերգութեամբ...:

Բնութագիրը:-

Եւ ձայնաւորը ընդունեց գրաբարեան (դասական շրջանի) հնչիւնական արժէքը՝ ամէնուրեք արտայայտելով ք հնչիւնը, իսկ բոլոր այն դէպքերում, ուր ք-ն յեացման էր ենթարկուած պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով, պէտք էր արտայայտել երկու տառերով՝ քե (դիցուք՝ յերես փխ. երես, յերգ փխ. երգ, յեւ (շաղկապը) փխ. եւ, յերագ փխ. երագ եւլն): Ու ձայնաւորը նոյնպէս գրաբարեան (դասական շրջանի) հնչիւնական արժէքը ստացաւ՝ ամէնուրեք արտայայտելով ք հնչիւնը. իսկ բառակազմում, ուր ք-ն պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով, լուում եւ արտասանուեւ է ոչ թէ ք, այլ քե (ոսկի-վոսկի, որդի-վորթի), գրութեան մէջ նման պարագաներում պէտք էր արտայայտել երկու տառով՝ քե: Ուղղագրական վերոյիշեալ նոր կանոննե-

րի պատճառով հայերէնի այբուբենից արտաքսուեցին է և զ տառերը:

Բառավերջում ա և ը տառերից յետոյ գրուող, բայց չարտասանուող ւ-ն ամէնուրեք վերացուեց (տղա փխ. տղայ, ծառա փխ. ծառայ, ձուլածո փխ. ձուլածոյ և այլն):

Հայագէտներ Ս. Սարգսեանի և Ստ. Մալխասեանցի առաջարկած վեւազրուածիւնը ընդունուեց առանց վերապահութեան. բոլոր այն դէպքերում, որտեղ լսուում և արտասանուում է վ՝ գրել միայն նշուած (վ) տառը. այդ նշանակում է որ ւ և ը նշանազրերի միաժամանակ արտայայտած բաղաձայնական գործառոյթը (իրբեւ վ) վերացուեց, իսկ ինչ վերաբերում է ւ և ը տառին, ապա այն, իբրև առանձին և անկախ այբբենական միակոր, դուրս գրուեց և պահպանուեց միայն ը տառախմբի մէջ: Փակ վանկում հանդէս եկող ը տառախումբը, որը արտասանուում էր իբրև յու (ուրախութիւն-ուրախություն), թնդիւն-թնդյուն, անկիւն-անկյուն), պէտք էր արտայայտել յու տառախմբով: Ո տառախումբը, փակ վանկում արտայայտելով ու, իբրև կանոն, սկսեց գրուել ու (լույս փխ. լոյս, բույր փխ. բոյր և այլն): Գրաբարի անցեալ դերբայը, իբրև որոշիչ գործածուելիս, փոխանակ եալ դերբայական վերջաւորութեան, ընդունեց յալ ձևը (Նիշայա գարձայա վորոշայա և այլն): Չայնաւորից յետոյ լսուող, բայց չգրուող ւ-ն պէտք էր արտայայտել նաեւ գրութեամբ (էյի փխ. էի, էյիք փխ. էիր, եական փխ. էական և այլն): Այսպէս և հայերէնի բոլոր երկբարբառներն ու եռբարբառները կերպարանափոխուեցին բառերում, երբեմն նաեւ անճանաչելիօրէն):

Բաղաձայններից ամէնից ակնառու և արմատական փոփոխութիւն կրեց ի կիսաձայնի գրութիւնը բառակազմում ձայնա-

ւորից առաջ, երբ պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով լսուում և արտասանուում է հ (հ), իսկ բառամիջում հանդէս է գալիս հնչիւնական իր բուն արժէքով (յ): Բառասկզբում ւ-ն, արտասանուելով իբրև և, գրաճանաչութեան և գրագիտութեան ուսուցման ժամանակ տեղիք էր տալիս շփոթութեան և բարդութեան: Աշակերտի յիշողութիւնը ծանրաբեռնում էր մտքի ձեւական վարժութեամբ. նա պէտք է անգիր սովորէր բառերի պատկառելի մի քանակ, որոնք թէեւ սկսուում էին ւ տառով, բայց արտասանուում էին հ-ով (յագուրդ փխ. հագուրդ, յանդիմանութիւն փխ. հանդիմանություն, յիմար փխ. հիմար, յաջող փխ. հաջող և այլն): Այն բացատրութիւնը, որ գրաբարի դասական շրջանում ի կիսաձայնը ունեցել է հնչիւնական միայն մէկ արժէք բոլոր հանգամանքներում և նշուած բառերում արտասանուել է յ (yagourd, yandimanoutiun, yimar, yajoyh), միայն գիտութեան համար նշանակութիւն ունի, իսկ գործնական տեսակէտից դա խճճուածութիւն և անըմբռնելի դժուարութիւն կարող էր յարուցել (և յարուցել է): Աւելին՝ խնդիրը առաւել կնճռուտուում էր նաեւ այն պատճառով, որ բառաբարդման կամ ածանցման դէպքում երկրորդ եզրով սկսուող ւ-ն նոյնպէս արտասանուում էր հ. անյուսալի (=անհուսալի), անյիշելի (=անհիշելի), բարեյաջող (=բարեհաջող) և այլն: Միւս կողմից՝ բացառութեամբ մի քանի բառերի (բայ, խոյ, հայ, ճայ, վայ), որոնց վերջում ա-ից յետոյ գրուած ւ-ն արտասանուում է հնչիւնական իր բուն արժէքով՝ իբրև ւ, մնացած դէպքերում բառավերջում ա-ից և ը-ից յետոյ գրուող ւ-ն սոսկ գրափակական նշանակութիւն ունէր: Ելնելով այս բառական բարդ հանգամանքից՝ որոշուեց ւ-ի փոխարէն հ գրել բոլոր այն

դէպքերում, երբ լսուում և արտասանուում է հագագային հնչիւնը՝ հ (h)՝ բառամիջում պահպանելով յ-ն (y), որը արդէն հանդէս է գալիս հնչիւնական իր բուն արժէքով, իսկ բառավերջում ա-ից յետոյ հնչիւնական արժէքից զուրկ համը ւ-ն չգրել:

Հետեւեալը պիտի արձանագրել պատմութեան համար՝ իբրև տխուր իրողութիւն. հայագիտութիւնը չի կարող ներել Մանուկ Աբեղեանին, որ, ակնաւոր գրականագէտ, բանասէր և լեզուաբան լինելով հանդերձ, ձեռնարկեց փաստօրէն երկու անգամ ուղղագրական չարափոխում մտցնել հայերէնում՝ ողբալի ձախողանքներով, մինչև անգամ իր ճիշդ դրոյթների հակասամբ ու հերքամբ, որ վերը քննեցինք:

Այս առաջին ռեֆորմը, իրականում, բացարձակ հրաժարումն էր դասականից և դարձեալ անցումը հնչիւնական ուղղագրութեան, որ բնորոշ է սոսկ առաջին անգամ անոր արի առնուող և մատենագրութիւն չունեցող լեզուներին...: Իսկ հին և հարուստ մատենագրութիւն ունեցող հայոց գրական լեզուի համար դա մի անարժանութիւն էր, որ բնաւ ներելի չէր և ոչ ոքի՝ ինչպիսի տիտղոսով կամ իշխանութեամբ էլ օժտուած լինի նա: Ով ով՝ ակադեմիկոս Աբեղեանը պիտի հասկանար, որ գրական լեզուի ուղղագրութեան հարց չէ, այլ պատմա-մշակութային հարցն էր ինչպիսիք է, ընդ որում ամէն մի ռեֆորմ իր հետ բերում է այս կամ այն չափով սահմանափակում կամ մինչև անգամ խզում այդ կարգի հարցադրութեան... իր ողբալի հետեւանքներով, ինչպէս այն պատահեց, տարաբախտաբար, արեղեանական առաջին (և երկրորդ, այն է՝ «Հայաստանեան ուղղագրութիւն» կոչուած) ռեֆորմի առնչութեամբ: Հազարամեակների պատմա-մշակութային դրոշմ ունեցող

հայերէնի բառապատկերները անճանաչելիօրէն եղծուեցին և աղասաղուեցին՝ արժէքակէտով և ջնջելով հայերէն բառերի պատմամշակութային որեւէ կարեւորութիւնը, դրանով իսկ գրկելով հնդեւրոպական հայոց լեզուի այն միջազգային հեղինակութիւնը, որ ըստ արժանւոյն ան վայելում է:

Երկրորդ ռեֆորմը 1940 թ. Օգոստոսի 22-ին հրամանագրուած ուղղագրական «նոր» համակարգն էր, որը և գործում է առ այսօր Հայաստանի Երրորդ Հանրապետութեան տարածքում՝ միայն մասամբ ամօթխածօրէն վերականգնելով դասականի օրինակափոխութիւնները, որով այնուամենայնիւ պահպանուեց անջրպետումը ե՛ւ դասականի, ե՛ւ նախասովետական արեւելահայ-արեւմտահայ, ե՛ւ սփիւռքահայ գրաւոր մշակոյթի հետ, ինչպէս և դարձեալ շարունակուեց արժէքակէտը հայոց հնամենի լեզուի պատմա-մշակութային միջազգային նշանակութեան...:

Բնութագիրը: Այլ կերպ ասած՝ «Հայաստանեան ուղղագրութիւն» է կոչուում արեղեանական «բարելաւուած» երկրորդ ուղղագրական ռեֆորմը: Իրականում՝ այն «խառնուրդ» է. միջին տեղ է գրաւում մաշտոցեան ուղղագրական համակարգի և հնչիւնական գրութեան միջև:

Այդ պատճառով ձայնաւորի մի քանի տաղեր յետագարձ կարգով ստացան իրենց նախկին հնչիւնական արժէքները՝ ինչպէս բուն, այնպէս էլ պատմական հնչիւնափոխութեամբ տարբերակուած արժէքներով: Այսպէս, բառասկզբում զ լսուելիս և արտասանուելիս (բացի զվ ու զք և զվսանա բառաձևերից), ամէնուրեք զ է գրուում, իսկ բառամիջում զ լսուելիս և արտասանուելիս՝ ը (զարք, զք, զգտակարք, զտաք, աթք, հարկաւորք և այլն): Իսկ եթէ բառասկզբում պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով վ լսուելի կամ արտասանուելի, ապա գրուում

է գրաբարեան ձեւով՝ տալով բառին իր հին կերպարանքը՝ որակ, որգի, ուկի, ուչինչ եւ այլն: Վս տառախմբով գրել թոյլատրուում է միայն այն դէպքում, երբ տուեալ բառերը՝ օտարազգի եւ այլն, փոխառեալ յատուկ կամ հասարակ անուններ են, ինչպէս՝ Վոլգա, Վոլտեր, վոլտ եւ այլն: Բառաբարդման կամ ածանցման ժամանակ բառերի եւ արմատների ուղղագրութիւնը պահպանուում է, այլ կերպ ասած՝ եթէ բառը կամ արմատը անջատ վիճակում գրուում է օ-ով, ապա ածման դէպքում եւս այդ օ-ն պահպանուում է անփոփոխ կերպով. հօգոստ, աւստրիական, ապօրինի, ալսօր եւ այլն: Սոյն կանոնների վերահաստատման շնորհիւ այբուբենում վերականգնուեց նաեւ հայերէնի այբուբենից «աքսորուած» օ տառը:

Ե տառը ինչպէս գրաբարեան իր բուն, այնպէս էլ պատմական հնչիւնափոխութեան տարբերակուած արժէքներով է հանդէս գալիս բառամիջում եւ բառակզրում. բառամիջում արտասանուում է օ, ինչպէս՝ տարբեր, պարեն, գեղեզիկ եւ այլն. բառակզրում պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով յե-ացման ենթարկուած յե հնչիւնախումբը արտայայտուում է ե-ով՝ պահպանելով գրութեան նախկին գրաբարեան կերպարանքը, ինչպէս՝ երջանիկ, երեխա, երագ, երդում եւ այլն: Վերականգնուեց բառակզրում գրուող է-ն, որ անհարկիօրէն դարձեալ արտաքսուած էր արեղեանական առաջին չարաբաստիկ ուղղագրութիւնից: Բառավերջում, ի տարբերութիւն գրաբարեան ուղղագրութեան, փոխանակ է-ի, գրուում է ե, երբ լսուում եւ արտասանուում է օ դիցուք՝ բագե, ախսե, ուկե եւ այլն: Ինչպէս վերջը նշուեց, բառաբարդման կամ ածանցման ժամանակ բառերի եւ արմատների ուղղագրութիւնը պահպանուում է:

Այդ նշանակում է, որ նման դէպքերում բառերի ուղղագրութիւնը ստուգաբանական բնոյթ է կրում. եյլեւջ, վայրէջք, հնէաքանութիւն, մանրէ, որեւէ եւ այլն: Այսպիսով, սոյն կանոնների սահմանումը մասամբ մօտեցրեց բառերի գրութիւնը իրենց նախկին՝ աւանդական կերպարանքին, որով ինչ-որ չափով վերահաստատուեցին մեր մատենագրութեան հետ ժամանակակից գրականութեան աղբյւրներն ու առնչակցութիւնները: Ը տառը նորից իր տեղը գրաւեց հայերէնի մաշտոցադիր այբուբենի համակարգում: Վերացուեց չ կիսաձայնի եւ վ տառի (ք-ից առաջ) անհարկի եւ չափից դուրս առատ գործածութիւնը՝ իբրեւ խորթութիւն եւ անգրագիտութիւն: Վեւագրութիւնը (վ լսուելիս բոլոր դէպքերում վ գրելը՝ ի հաշիւ սւ-ի եւ է-ի), ինչպէս նաեւ փակ վանկում վ-ի փոխարէն յ վ գրութիւնը պահպանուեցին, ուստի եւ չ տառը, իբրեւ անկախ այբբենական միաւոր, դարձեալ դուրս մնաց գործածութիւնից: Մնացած ուղղագրական կանոնները նախորդ շրջանից նոյնութեամբ ընդունուեցին ուղղագրական նոր սիստեմի մէջ:

Ինչպէս առաջին, այնպէս եւ երկրորդ ուղղագրական ռեֆորմների պատճառով հայոց լեզուի կորուստը մեծ է նաեւ ոչ պակաս էական մի հարցում. հայերէնը, իրականում, պատմա-մշակութային՝ քաղաքակրթական առումով լիովին արժէգրկում է իր միջազգային հեղինակութիւնը:

Բայց եւ այս երկրորդ ռեֆորմը եւս, ինչպէս ակնբախ է քննութիւնից, լռելեայն խոստովանութիւնն է դարձեալ ձախողանքի եւ վրիպանքի...:

Բանն այն է, որ եթէ այսօր հայոց հարուստ լեզուն իր բառազանձով տրամադրուում է հնդեւրոպական ընդհանուր լեզուաբանութեանը քաղաքակրթական եւ մշակութային անգնահատելի վկայու-

թիւններ, որոնք շատ անգամ նաեւ գոհարային յայտնութիւնների բնոյթն ունեն միջազգային ճանաչմամբ՝ ցեղակից այլ լեզուների օրինակագրութիւնների բացայայտման առումով, ապա դա հնարաւոր է դառնում միայն ու միայն բառապատկերների դասական ուղղագրութեան շնորհիւ եւ ոչ թէ արեղեանական կամ «հայաստանեան» ուղղագրութեամբ աղաւաղուած եւ աղճատուած բառապատկերների միջոցով...», որով ցաւազնօրէն մթագնեց նաեւ անգիր ժամանակաշրջանի հայոց պատմութիւնն ու քաղաքակրթութիւնը...»:

Բայց այստեղ չենք կարող չարձանագրել, որ ամենախայտառակ գրութիւնը հայագիտական շխատութիւնների ուղղագրութեան բազմազանութիւնն է կամ խայտաբղէտութիւնը հայաստանեան հրատարակութիւններում, որն ինքնին նաեւ ժխտումն է նոյնիսկ հայաստանեան ընդհանուր միասնական ուղղագրութեան թուացողութեան՝ իբրեւ համակարգի...: Հայագէտը, փաստօրէն, երեք տեսակի գրութիւններով է արտայայտուում հայերէնի բառապատկերները, երբ իր ուսումնասիրութիւններում աղբիւրներից վկայակոչումներ անելիս հայ հին մատենագրութիւնից՝ ա. օգտագործում է դասական ուղղագրութիւնը՝ նախասովետական (արեւելահայ եւ արեւմտահայ) եւ սփիւռքահայ գրական աղբիւրներից, բ. «արեւմտահայ» ուղղագրութիւնը՝ մասնակի տարբերումներով դասականից, եւ գ. սեփական խօսքի կամ մեկնաբանութիւնների համար «հայաստանեան» ուղղագրութիւնը, որը էսպէս տարբերուում է դասականից իր ցաւազին մեղանչումներով...:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՅԵՏԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԱԶԳԱԿՈՐԾԱՆ ԿԻՐՏՈՒՄՆԵՐՈՎ

Հարկ է արձանագրել, սակայն, բուն շարժառիթները ուղղագրական ռեֆորմ-

ների խնամքով թաքցուում էին հայ մտաւորականութիւնից ու հասարակայնութիւնից, որոնք յայտնի դարձան միայն վերջերս ի լուր ամէնքի (տե՛ս Ռաֆայէլ Իշխանեանի ուշագրաւ յօդուածը՝ «Մեր ուղղագրական հիմնահարցը» խորագրով, «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 21-23-ը Մայիսի, 1983 թ.): Այդ բուն շարժառիթները, որոնք «բարեմիտ» պատճառաբանութիւններով էին քողարկուում, իրականում, սակայն, ինչպէս այժմ առաւել քան բացայայտ որոշակութեամբ պարզուում է, ազգակործան նպատակներ էին հետապնդում:

Առաջին՝ միասնական մաշտոցեան ուղղագրական համակարգի վերացմամբ վերջնական երկփեղկում առաջացնել ազգային ամբողջական կառոյցում, որի շաղկապող հոգեւոր խարիսխը իր յուսալի յարատեւութեամբ մաշտոցեան ուղղագրութիւնն էր հանդիսանում արժանատրապէս՝ հարիւրամեակներ ու հազարամեակներ շարունակ: Իսկ երկփեղկումը, իր հերթին, նպատակ էր հետապնդում՝ կտրել Սփիտքը Հայրենիքից եւ մեկուսացնել հայրենաբնակ ժողովրդին արտերկրի հայութիւնից՝ հոգեւոր ընդհանրական մշակոյթի հաղորդակցման կասեցումով ու արգելումով: Այս ծրագիրն իրագործուում էր համաձայն ստալինիզմի այն խեղուած գաղափարաբանական պատկերացման, որ իբրեւ թէ «սովետական մշակոյթի» ստեղծման համար նախապայման էր՝ բացարձականացուած դասակարգային պայքարի տեսութեան իսկ թելադրանքով «հերմետիկ խստապահանջութեամբ» նրան շատուումն ու առանձնացումը սփիւռքեան «բուրժուական» ամէն մի ազդեցութիւնից ու ներթափանցումից...:

Երկրորդ՝ նոյն նպատակից բխող մեկնակէտն այն էր, որ մաշտոցեան ուղղագրութեան վերացումով անջրպետ կ'առաջանար նաեւ անցեալի մեծահարուստ հոգեւոր ժառանգութեան միջեւ, որով եւ կը հեշտացուէր

դասական հնամենի մեր ազգի իսպառ «խորհրդայնացումը»՝ ռուսականացման ձուլումի ամբողջական ամարտով՝ ըստ «ձեռով ազգային եւ բովանդակությամբ սոցիալիստական» կեղծ թեզիսի ծրագրային պահանջները իրականացման...:

Երրորդ եւ վերջնական նպատակադրումը, որ առաւել արտառոցն ու անհեթեթն է, խոստովանում է ցինիկաբար ուղղագրական ռեֆորմի նախաձեռնողներից ու իրականացնողներից Խորհրդային Հայաստանի այն ժամանակուայ Լուսաւորութեան նախարար Պ. Մակինցեանը. «Անձնապէս ես ոչ մի դէպքում ոչ միայն ձայն չէի տայ ի նպաստ այդ ռեֆորմին (իմա՝ արեղեանական 1922 թուականի ռեֆորմի մասին է խօսքը - Լ. Խ.), եթէ նրան չհամարէի մի աստիճան՝ դէպի լատինական գիրը անցնելու գործը դիրացնելու համար»: Աւելին՝ ողբերգա-զաւեշտականն այն է, որ ինքն էլ է հասկանում արեղեանական ուղղագրական ռեֆորմի անպէտքութիւնը՝ յայտարարելով, որ նրան ամենեւին չէր կարելի գոհարել մաշտոցեան ուղղագրական համակարգը, երբ վերջինս լիովին կատարում էր գրական հաղորդակցումը դարերի յարահալով ընթացքում ոչ միայն իրարայարող սերունդների, այլեւ մեր ժողովրդի պատմականօրէն առաջացած արեւելահայ եւ արեւմտահայ հատուածների միջեւ: Այդ իսկ պատճառով Լուսաւորութեան այս վայ-նախարարը հարկադրաբար խոստովանում է նաեւ. «Եթէ հայերէնի ուղղագրութեան ռեֆորմին վիճակուած է ստոյգել մնալ կէս ճանապարհին, այս դէպքում անկի լաւ կը լինէր առանց այլեւայլի դառնալ հին ուղղագրութեանը...»:

Բայց ինքնամերկացմամբ առաւել յստակեցնելով իր հրէշաւոր նպատակադրումը՝ Պ. Մակինցեանը առանց դոյզնինչ խղճի խայթի ու զգաստութեան՝ շտապում է յուղարկաւորելու, պատմու-

թեան «արխիւը» նետելու մեր Ազգային ինքնութեան անպարտելիութեան այն հրաշագործ 36 զինուորներին, որոնք յաղթական իմաստութեամբ առաջնորդել են մեր ժողովրդին՝ պատմութեան արհաւիրքների խաշուղիներում անգամ չմոլորուելու հոգեկան ամրութեամբ ու անասանութեամբ...: Զաւեշտօրէն «լուսաւորութեան» նախարար յորջորջուածը զառանցում է միաժամանակ. «Որքան շուտ մենք արխիւը անտենք «սահակմետրոպէան» անկիւնատը, տգեղ եւ աչքերի համար վնասակար այբուբենը (?!), այնքան շուտ կ'ազատուենք Արեղեանի ուղղագրութիւնից» (sic!) (տե՛ս «Զարիա Վոստոկա», ռուս., 1924, թիւ 279): Ահա թէ որտեղ է թաղուած շան գլուխը ուղղագրական ռեֆորմ կատարելու շարժառիթների... պետական մտայղացմամբ:

Հայ մշակոյթի ու լուսաւորութեան պատմութեանը ողբալիօրէն անգիտակ այս «կրթական» նախարարի բարբառանքին հակադրում ենք գերմանացի մեծանուն հայագէտ Իոզէֆ Մարկուարտի գիտական գնահատականը Հայերէնի մեսորոպատեղծ այբուբենի մասին: Համեմատութեան եւ ընդհանրացման ենթարկելով մաշտոցեան գրահամակարգը այլ ժողովուրդների այբբենական համակարգերի հետ՝ նա յանգել է հետեւեալ խորաքնին եզրակացութեան. եթէ մենք նկատի առնենք պատմական այն բացառիկ ծանր իրադրութիւնը, որի մէջ Մաշտոցը կարողացաւ զարթնեցնել հայ ժողովրդի ազգային գիտակցութիւնը, եւ նրա այդ գործը համեմատենք Պիպինի եւ նրա գինակիր Վիլֆրիդի գործունէութեան հետ, այս վերջինները «խեղճ թգուկներ կ'երեսան՝ համեմատութեամբ մտքի այդ հսկայի» (տե՛ս Իոզէֆ Մարկուարտ, Պատմութիւն Հայերէն նշանագրերու եւ վարուց Ս. Մաշտոցի, թարգմ. Ա. Վարդանեանի, Վիեննա, 1913, էջ 8):

Դեռ աւելին՝ գերմանացի այս երախտաւոր հայագէտը, նաեւ հետեւեալ հաստատումն անելով, եզրափակում է իր միտքը հայ մատենագրութեան ռահուրանների՝ առաջին Թարգմանիչների մասին. «Մի ժողովուրդ, որն իր ծոցից ծնել է այդպիսի մարդիկ եւ պաշտում է Արանց՝ որպէս իր հերոսների, քանի դեռ նա հետեւում է Արանց օրինակին, չի կարող բնաջնջուել, որքան էլ թուրքերը, քրդերը, թաթարները, պարսիկները եւ բոլոր մեծ տէրութիւնները հակառակ լինեն Արան...»:

Երկրորդ ուղղագրական ռեֆորմից յետոյ, երբ բոլոր հայաստանեան տպագրութիւնները իրացում էին նոր ուղղագրութեամբ, բացառութիւն տրուեց միայն ակադեմիկոս Ստ. Մալխասեանցի «Բացատրական Բառարանի» չորս հատորներին՝ մաշտոցեան աւանդական ուղղագրութեամբ (Երեւան, 1944-1945 թթ.) լոյս ընծայուելու, քանի որ նրանում ընդգրկուած էին ոչ միայն արդի հայերէնի բառերն ու բառակապակցութիւնները, այլեւ գրաբարի եւ միջին հայերէնի, մասամբ եւ բարբառների բառազանգները: Հետեւաբար նոյնիսկ տեխնիկապէս անհնարին էր հայաստանեան ուղղագրութեամբ տպագրելու, բազմաձեւ ուղղագրութիւնների քասային վիճակից խոյս տալու համար...: Այս միանգամայն հաւաստի եւ զօրեղ պատճառաբանութիւնը զարմանահրաշօրէն միայն Մալխասեանցին յաջողութիւն ապահովեց... մաշտոցեան ուղղագրութեամբ հրատարակելու:

Սակայն այդ «բացառութիւնն» իսկ զլացուեց մեծանուն լեզուաբան ակադեմիկոս Հրաչեա Աճառեանին, որ գոնէ «Արմատական բառարանը», ստուգաբանական իր բազմաբարդ հանգամանքով, տպագրուի միայն ու միայն մաշտոցեան աւանդական ուղղագրութեամբ: Եւ նա ստիպուած, մի աչքանի իր տկարու-

թեամբ, սիզիֆեան աշխատանք կատարեց. ձեռքով կրկին, երեքկին, հաւանաբար չորեքկին անգամ ընդօրինակելով վեց հատորներն էլ՝ ապակետիպ հրատարակեց (եօթներորդը հետագայում տպագիր լոյս տեսաւ), եւ այդ այն դէպքում, երբ իւրաքանչիւր հատոր 900-1000 մեծադիր էջերից էր բաղկացած...: Դա միայն բողոք չէր ուղղագրական ռեֆորմի դէմ, այլեւ միանգամայն ճիշդ ցուցում եւ պատգամ նաեւ Հայաստանի մտաւորական հետագայ սերունդների համար...:

Նկատենք. բազմամեայ ուսումնագիտական իմ հայաստանեան փորձառութիւնը եւս չափազանց պերճախօս է. յիշում եմ ցայտուն մի դէպք, որ երբեք մոռանալ չեմ կարող: Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի նիստերի դահլիճում գիտական խորհրդի նիստ է. պաշտպանութեան է դրուած թեկնածուական աւարտաճառ հետեւեալ թեմայով՝ «Հայերէնի բառապաշարի հարստացումը սովետական շրջանում»: Դիտարանում (անունը չեմ ուզում տալ), որ հայ լեզուաբան-մասնագէտի որակաւորում պէտք է ստանար, ուզեցել էր «հիմնաւորել», նաեւ մինչեւ անգամ «ապացուցել», որ բազմադարեան ինքնութիւն ունեցող հայերէն բառերից՝ յագորդ, յախտոն, յամառ, յաղթանակ, յարգի, յարմար, յուշ, յիշատակ, յետոյ, յեղեղուկ, յակիմթ, յաճախ, յանցանք եւ այլն բազմաթիւ հնամենի բառեր իբրեւ թէ... սովետական շրջանում են կերտուել: Նայել է «Հայկազեան բառարանում» է տառի տակ, ինչպէս հնչում են դրանք այժմ, փոխանակ՝ Զ-ի, որը ծագումնաբանական եւ պատմական միակ արժէքն է այդ բառերի, եւ... չի գտել: Լեզուաբանութեան ապագայ «մասնագէտը» չի ըմբռնել այն օրինաչափութիւնը, որ պատմական հնչիւնափոխութեան պատճառով դասական հայերէնի Զ-ով սկսուող

բառերը հետագայ ում արտասանուել են և բնականաբար ստուգման համար պէտք է Ձ տառի տակ գտնուող բառերի հետ իր համեմատութիւնները կատարէր...: Ահա թէ ինչպիսի թիւրիմացութեան է առաջնորդել այսպէս կոչուած արեղեանական կամ «հայաստանեան» ուղղագրութիւնը նոյնիսկ «լեզուաբանին»...:

Յիշում են նաեւ ինքնին չափազանց պերճախօս մի դէպք դարձեալ ուսումնագիտական քննարկումներից, որոնց ինքս եմ ակնատես եւ ականջալուր եղել. ասպիրանտների թեմատիկ ուսումնասիրութիւնների զեկոյցներն են քննարկուում. հերթը ապագայ հայ մանրանկարչութեան պատմութեան մասնագէտ պատրաստող Լեւոն Ազարեանինն է: Յայտնում է, որ կիրիկեան մանրանկարչութեան պատմութեան տեսական ընդհանրացման համար ինքը յենում է ամերիկահայ վաստակաշատ բանասէր Քիվրտանի այսինչ աշխատութեան վրայ...: Մի պահ ապշեցինք՝ այս նորայայտ հեղինակութեան ինքնութեանը մեր անծանօթ լինելու տարակուսանքով...: Եւ յանկարծ վերլիշեցինք, որ դա ոչ այլ ոք է, քան հանրայայտ Յարութիւն Քիւրտեանը, որի մականունան ընթերցումը շփոթութեան մէջ է գցել ասպիրանտին՝ պարզապէս չիմանալով և տառի հնչոյթային-արտասանական արժէքը չի երկբարբառի արտաբերման պարագային...: Ընկալելով այն իբրեւ «փոքր վ», որով այսօր էլ ճանաչուում է Հայաստանում գրագէտների շրջանում, դժբախտաբար, առհասարակ:

Աւելին՝ տողերիս հեղինակը շուրջ երեսնամեայ աշխատանքային գործակցութիւն է ունեցել Հայաստանում, նաեւ՝ մտերմութիւնը վայելելու երջանիկ պատեհութիւնը ակադեմիկոսներ Հրաչեա Աճառեանի, Արարատ Ղարիբեանի, Գուր-

գէն Սեւակի, Էդուարդ Աղայեանի եւ այլոց: Չափազանց բնութագրական է հետեւեալ անձնական վկայութիւնը ակադեմիկոս Վեդուաբան ակադեմիկոս Գուրգէն Սեւակի, որ նաեւ մի շարք դասագրքերի ու հայագիտական ծանրակշիռ աշխատութիւնների հեղինակ է. մի անգամ այսպիսի անկեղծ խոստովանութիւն արեց ինձ, երբ իր ինքնագիր ձեռագրում ցոյց տուեցի յաճախակի սպրդած ուղղագրական խայտաբղէտութիւնները.

-Իմ սերունդը, ընկե՛ր խաչերեան, երբ տեսակ ուղղագրութիւն է տեսել, ինչպէ՞ս կ'ուզենայիք, որ հայաստանեան ուղղագրութիւնն անթերի իմանար...:

Իսկ 1981 թուականի Յունուարին վաստակաշատ հայագէտ եւ ընդհանուր լեզուաբանութեան ճանաչուած տեսաբան ակադեմիկոս Էդ. Աղայեանին հրատեղատալիս, ընտանեօք Միացեալ Նահանգներ տեղափոխուելու առնչութեամբ, վերջինս երկու խնդրանք ինձ յայտնեց. «Առաջինը՝ նամակ չգրես ինձ Լոս Անջելեսից» եւ հասկանալի մտավախութիւնն իր յայտնելով ԿԳԲ-ի առնչութեամբ. «Երկրորդ՝ արտասահմանեան մամուլում կը պաշտպանես մեր հայաստանեան ուղղագրութիւնը...»: Տագնապը թափանցիկ էր. իր ամբողջ գիտական կեանքում հրատարակած տասնեակ լեզուաբանական հատորների եւ Բացատրական երկհատոր ստուարածաւալ բառարանի հեղինակութիւններով, ինչպէս եւ Հր. Աճառեանի ժառանգութեան լոյսընծայմամբ մեծ վաստակ էր թողել եւ արժէքաւոր ներդրում կատարել հայագիտութեան մէջ, ուստի եւ իրօք հասկանալի երկիւղ էր ապրում հետագայ սերունդների կողմից չկարողացուելու համար՝ դասական ուղղագրութեանը վերագառնալու պարագային...: որ տագնապն է միաժամանակ Հայաստանի ներկայիս քիչ թէ շատ վաստակաւոր

բոլոր հայագետների ու գրողների, այստեղից եւ իրենց բարձրացրած ՉԿԱՄՈՒԹԵԱՆ «փաստարկների» պատուարը...: Ով ով՝ լեզուաբանները շատ լաւ են պատկերացնում, որ ուղղագրութիւնը գրաւոր հարգակցման միակ յուսալի եւ պարտադիր պայմանն է, տուեալ ազգի տարբեր հատուածների ու տարբեր սերունդների միջեւ շղկապուածութեան երաշխիք թէ՛ աշխարհագրական տարածքային եւ թէ՛ ժամանակային շրջափոխների երկեակ առումներով: Բայց տուեալ դէպքում լեզուաբաններն ու բանասէրները մտահոգուելու կարիքը չունեն, քանի որ նրանց աշխատութիւնները, մասնագիտական բնոյթի լինելով, ապագայում եւս մասնագէտներն են առնչուելու իրենց աշխատութիւններին, իսկ վերջիններս, բնականաբար, իրենց մասնագիտութեան իսկ բերումով ծանօթ պիտի լինեն նաեւ այսպէս կոչուած, արեղեանական եւ «հայաստանեան» ուղղագրութիւններին: Մինչդեռ ոչ մասնագէտ զանգուածների համար այնպէս էլ կարեւորութիւն եւ հրատապ հետաքրքրութիւն ունենալ չի կարող՝ ընկալելու համապատասխան պատրաստուածութիւն չունենալու իրողութեան իսկ պատճառով...:

Առաջին խնդրանքը միանգամայն սրբութեամբ կատարեցի, բայց երկրորդի կապակցութեամբ՝ գիտակցաբար... դրժեցի: Վերջինիս դէպքում անձնական ցանկութիւնը, սակայն, բախուում էր համագային շահերի՝ խորապէս համոզուած լինելով, որ «Ազգի տունը» կարգի բերելու համար երբ էլ լինի՝ վերադառնալու ենք մաշտոցեան միասնական ուղղագրութեանը...: Իմ իսկ նախաձեռնութեամբ եւ հայագէտիս ինքնական պատասխանատուութեամբ հէնց յաջորդ տարին Արեւմտեան թեմի առաջնորդարանի հովանաւորութեամբ լոյս տեսած առաջին եւ հետագայ հայագիտական աշխատութիւններս հրատարակեցի

մաշտոցեան ուղղագրութեամբ...: Հնայածայն իրողութեանը, որ Հայաստանում իմ հեղինակութեամբ արդէն իսկ հինգ աշխատութիւններ լոյս էին ընծայուել հայաստանեան ուղղագրութեամբ...:

Միաժամանակ դեռեւս 1990 թ. ուղղագրութեան հարցերի արծարծմանը նուիրուած իմ ուսումնասիրութիւններում նաեւ պատմութեան համար անվերապահօրէն յայտարարել եմ.

«Սփիւռքահայ դպրութեան եւ գրականութեան երախտարժան ներդրումն ենք համարում եւ այն, որ հաւատարիմ մնաց դասական՝ մաշտոցեան ուղղագրութեան համակարգի նկատմամբ եւ ոգի ի բոյն, իբրեւ ազգային ինքնութեան վաւերականութիւն, սկզբունքային անդրդուելիութեամբ կիրառեց եւ պահպանեց այն» («Արմաշ» հայագիտական պարբերագիրք, 1990, թորոնթո, էջ 85, նաեւ «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը եւ Քննական Միտքը V-XVI դարերում», Լիզբոն, 1992, հտ. Բ, էջ 406): Վերջում՝ ամփոփելով եզրակացրել ենք.

«Բնաշխարհի մեր ժողովրդի ազգային-քաղաքական գիտակցութեան ներկայ բացառիկ զարթօնքն ու հասունացումը հրամայաբար թելադրում են.

«Հրաժարուել ստալինիզմի պարտադրած արեղեանական ժամանակավրէպ վերջին ուղղագրական համակարգից եւս, որը՝

«ա. խրամատաւորում է մեր ազգային միասնութիւնը՝ հակասելով «մէ՛կ ազգ, մէ՛կ Հայրենիք եւ մէ՛կ մշակոյթ» գերնպատակին. արժէզրկում եւ արհեստականօրէն դժուարացնում գրական հոգեւոր հարգակցութիւնը Բնաշխարհի եւ Սփիւռքի միջեւ՝ մեր մշակութային ամբողջական հարստութեան խանգարումով. ջլատում համազգային համախմբումով պայմանաւորուած ազգային ուժականու-

թիւնը. արգելափակում ազգային հպարտութիւն պարզեւող մաշտոցեան օրերից հայի հանճարով ստեղծուած իմացական վիթխարի գանձարանը գրաբարեան լեզուի՝ հայորդի մտաւորական սերունդների հասողութիւնից.

«բ. հայոց լեզուի հնամենի բառապատկերների եղծումով եւ աղաւաղումով զրկում հայերէնը պատմա-մշակութային արժէւորումներից եւ ունեցած միջազգային նշանակութիւնից.

«գ. իմաստագրկում հայերէնի ունեցած միջազգային քաղաքակրթական նշանակութիւնից՝ ամլացուելով միջազգային

հայագիտութեան ուսումնասիրման աւարկայ դառնալուց:

«Խոհական ոչ մի ժողովուրդ, բնականաբար, նման զոհաբերութեան չէր գնայ վասն ինքնաթերարժէքման եւ... մշակութային խեղումների:

«Պահանջելով՝
«Վերադառնալ մաշտոցեան ուղղագրական համակարգին՝ որպէս մեր ազգային ինքնութեան վաւերականութեան» (տե՛ս «Արմաշ», էջ 86, նաեւ մեր աշխատութիւնը՝ «Հայ լեզուաբանութեան առաջացման պատմութիւնը...», հտ. Բ, էջ 405):

ԱՔԵՄԷՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XVIII ՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՋ

ԲԱԲԿԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Պարսից թագաւոր Դարեհ Ա Վշտասպը (522-485 թթ.), յաղթանակ տանելով գահի համար մղուած պայքարում, Աքեմէնեան պարսից տէրութիւնը ենթարկեց վարչական վերածելումների, բաժանելով այն 20 սատրապութիւնների: Պատմահայր Հերոդոտոսի տեղեկութեան համաձայն՝ «Իւրաքանչիւր ազգի նա կցեց մերձակայ հարեւաններին եւ, բացի այդ, հեռուոր ազգութիւններին միացրեց այս կամ այն իշխանութեանը»¹: Հնարաւոր է, որ այս սկզբունքը երբեմն խախտուել է, կապուած, թերեւս, աշխարհագրական կամ տարածական գործօնի հետ, սակայն դժուար չէ տեսնել, որ պարսից արքունիքի նպատակը՝ որպէս պետական քաղաքականութիւն, եղել է ոչ թէ որեւէ ժողովրդի վարչական տրոհումը սատրապութիւնների մէջ, այլ մի քանիսին մէկ վարչական միաւորի մէջ ներառնելը: Ուստի կարծում ենք, յոյն պատմիչի տեղեկութիւնները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին նոր մեկնաբանութեան կարիք ունեն: Ըստ Հերոդոտոսի՝ «Պակտիկէից, արմէններից² եւ հարեւաններից մինչեւ Եւքսինեանը ստացւում է չորս հարիւր տաղանդ, սա տասներեքերորդ նահանգն էր»³: Ուսումնասիրողների ցայսօր քաղաքացիութիւն ստացած կարծիքով՝ Հայաստանին է վերաբերում նաեւ տասնութերորդ սատրապութեան նկարագրութիւնը, որի մասին ասւում է. «Մատիենների, սասպեյրների եւ ալարոդների վրայ սահմանուած էր երկու հարիւր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»⁴: Ստացւում է, չնայած բոլոր փաստերին եւ փաստարկումներին, մի անհեթեթ վիճակ: Մի կողմից՝ բոլոր

տուեալները յստակ հաւաստում են հայ ժողովրդի գոյութիւնը Արեւելեան Հայաստանում, որտեղ փորձում են տեղադրել XVIII սատրապութիւնը, իսկ միւս կողմից՝ ըստ Հերոդոտոսի, վերջինս բնակեցուած է ոչ թէ հայերով, այլ մատիեններով, սասպեյրներով եւ ալարոդներով: Ուստի հակասական եւ իրարամերձ տեղեկութիւնները հաշտեցնելու նպատակով կամայ թէ ալամայ, ծնունդ է առնում այն եզրակացութիւնը, թէ ալարոդների տակ պէտք է հասկանալ հայերին կամ էլ հայացած ուրարտացիների հետնորդներին: Նման եզրակացութեան յանգել է Գ. Սարգսեանը, որն, անդրադառնալով այդ խնդրին, գրել է. «Արեւելեան (Հայաստանի - Յ. Բ.) մասի վերաբերեալ այդ (հարցուփորձից, պարսիկների եւ յոյների պատմածներից, լոգոգրափոսների գրառումներից) աղբիւրները լռել են, եւ Հերոդոտոսը նոյնիսկ չի իմացել, թէ Հայաստանը (Արմենիան) տարածւում է նաեւ այդ հողերում: Դրանց մասին նա տեղեկացել է միայն պարսկական պաշտօնական վաւերագրերից, այն էլ արամերէնից արուած յունական թարգմանութիւններից, որտեղ Հայաստանը (Արմենիան) հնացած ձեւով կոչուել է Ուրարտու: Այսպէս է պատահել, որ նա Արեւելեան Հայաստանը բնակեցրել է ալարոդներով (ուրարտացիներով), մինչդեռ այնտեղ հայերն են ապրել, ինչպէս այդ բխում է Բեհիստունեան արձանագրութեան մէջ այդ տարածքը Արմինա անուանելու փաստից: Ուրարտացիներն այդ ժամանակ այլեւս գոյութիւն չունէին, նրանք հայացել էին: Ուստի Հերոդոտոսի այս հատուածում յիշատակուած ալարոդների տակ միանշա-